ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

23 փետրվարի 2011 թվականի N 15-Ա

ք. Հրազդան

Ա. ԳԱԼՍՏՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2006 թվականի օգոստոսի 2-ի N 143-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 60-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա>> պետական փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 21-ի N 3 որոշումը և *Ա. Գալստյանի* անձնական դիմումը՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ.

1. ***Արթուր Գալստյանին*** 2011 թվականի փետրվարի 23-ից հինգ տարի ժամկետով նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր:

2. Հանձնարարել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ ***Գայանե Մարտիրոսյանին***՝ եռօրյա ժամկետում կազմակերպել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա>> պետական փակ բաժնետիրական ընկերության հանձման-ընդունման աշխատանքները:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ